Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

017.4
S-99
1882
9514

# ՑՈՒՑԱԿ

## ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՑ

ՌՅԼԱ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1882

017.4
Կ-99

510
19846-59
510-2009

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

Աստղանիշով (*) Գրեանքն սակաւագիւտ են։

Գրոց գիները նշանակուած են միջակ կազմին եւ փառակազմի վրայ Երուսաղէմի համար ընթացիկ, իսկ հեռաւոր Քաղաքաց եւ Գաւառաց համար ոսկի դրամ, Օսմ. լիրայն 100 ղուրուշի հաշուով։ Կաշեկազմ կամ մասնաւոր կազմ ունեցող մատեաններուն գինը տարբերութիւն կ'ունենայ նշանակուածներէն։

Ճաշոցն, երկու հատորն միասին կազմուած, 300 ղահեկան. իսկ երկու հատորներն առանձին կազմուած 320 ղահեկան։

Ս. Աթոռոյս Տպարանէն ելած Գրեանքն կը ծախուին գլխաւորապէս 'ի Ս. Վանս, 'ի Փոխանորդարանի Կոստանդնուպոլսոյ, 'ի Բերլին, եւ 'ի Գերմանիկ յատուկ գործակալաց ձեռամբ։

Գին Ցուցակիս 40 փարայ։



# ՑՈՒՑԱԿ

## ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ

### Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

## Ա.

| | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|
| | Ղր. | Փր. | Ղր. |
| Ագնէս, բարոյական վէպ, Թարգմանեաց 'ի Հայերէնէ 'ի Տաճկերէն Յ. Քիւրքճեան Հայ տառերով և Տաճիկ լեզուաւ, տպագրեալ 1872 ամի, ութածալ, 130 երես. | 4 | | |
| Աղօթագիրք փոքր, պատկերազարդ, աշխատասիրեաց Կ. Յ. Ե. տպեալ 1867 ամի. ութածալ, երես 108. բոլոր Ս. Տեղեաց մէջ առանձին առանձին աղօթելու համար աշխարհաբար սրտաշարժ աղօթքներ. | 2 | | |
| Ամեն մարդոց բարեկամ կամ առողջական. գրեաց Մ. Վ. Մարկոսեան, տպեալ 1875. ութածալ, երես 192. յորում աշխարհաբար լեզուաւ բովանդակուած են մարմնաւոր և հոգեւոր կենաց առողջապահութեան ընտիր խրատներ. | 2 | | |
| Անուրջք ի Սիօն. գրեաց Մ. Թաթուլ. տպեալ 1869. ութածալ, 44 երես. գրաբար ոտանաւորներ են, Քրիստոսի տնօրէնութեանց վերայ յօրինուած. | 1 | 20 | |
| Աշխարհագրութիւն համառօտ. 'ի Գ. Ս. Խաչպայեանէ. տպեալ 1874. ութածալ, 364 երես. յորում պարունակին բնական, քաղաքական եւ ուսումնական բաժանմունք աշխարհագրական գիտութեան աշխարհաբար լեզուաւ, դասական կարգաւորութեամբ եւ ընթեռնելի եղանակաւ 'ի պէտս Ազգային դպրոցաց. | 7 | | 14 |
| Առաքինութեան ճամբայ, կամ Մենտոր մանկանց. Թարգմանեաց յիտալերէնէ Տ. Հ. Սաւալանեան. Բ. | | | |

| | Նխ. Ղ.Ղ. | Նխ. Փր. | Փոխ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| տիպ. 1872. ութածալ. 236 երես. աշխարհաբար գեղեցիկ եւ համառօտ պատմութիւններ դպրոցական մանկանց ընթերցանութեան համար. | 7 | | 14 |
| ԱՒԵՏԱՐԱՆ ԱՏԵՆԻ. տպեալ 1873. քառածալ. 286 երես. ցուցակաւ 'ի միասին, ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ. | 30 | | 45 |
| ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ. տպեալ 1875. քառածալ. փայլուն գիրքով եւ խոշոր տառերով. | 20 | | |
| ԱՒԵՏԱՐԱՆ ՃԱՇՈՒ, տպեալ 1868. քառածալ. 356 երես. ամսացուցով հանդերձ, յորում օրական և տօնական կարգաւ դրուած են Աւետարանք ըստ իւրաքանչիւր աւուրց. | 30 | | 45 |
| ԱՒԵՏԱՐԱՆ. միջակ գիրքով, տպեալ 1867. | 6 | | 12 |
| ԱՒԵՏԱՐԱՆ ԱՄԵՆԱՓՈՔՐ. տպեալ 1875. ութածալ. 488 երես. մանր ու գեղեցիկ տառերով եւ ծոցակիր գիրքով. | 8 | | 15 |

## Բ

| | Նխ. Ղ.Ղ. | Նխ. Փր. | Փոխ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ ՄԷՋ. Բ. տիպ. 1874. ութածալ. 80 երես. ընտանեկան կենաց և բարոյական կրթութեան վերաբերեալ տրամախօսութիւնք (սպառած). | 1 | | |
| ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ. տպեալ 1875. ութածալ. 399 երես. թարգմանեցին ծառանգաւոր Սանուհիք գրաբարէ յաշխարհաբար հանդերձ յաւելուածովք | 7 | | 14 |
| ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԵՒ ՁՂՋՄԱՆ. գրեաց Միրտիչ Վ. Արծրունեան, տպեալ 1854. ութածալ. 232 երես. յորում պարզ գրաբար լեզուաւ բացատրուած են, Հրաժարիմքն, Մեղայն, Ողորմեայն, և Յիշեցուք, Աշխարհ ամենայն. Առաւօտ լուսոյ երգերն. (սպառած). | 6 | | |
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԵՆԱՑ. տպեալ 1880. ութածալ. 125 երես. կը նկարագրէ մանրամասնօրէն՝ Ազգային սեփհականութիւններն, ընկերական իրաւունքներն, արտօնութիւններն եւ առաւելութիւններն 'ի Տնօրինական Ս. Տեղիս. | 3 | | |



## Գ

| | Նխ. Ղ.Ղ. | Նխ. Փր. | Փոխ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ԳԱԳԻԿ ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. գրեաց Մ. Կ. Տ. Մինասեան, տպեալ 1872. ութածալ. 192 երես. ողբերգութիւն աշխարհիկ լեզուաւ, յորում յիշեալ Հայրենասէր թագաւորի վերջին կենաց պատկերն նկարագրուած է թատերական ձեւով. | 5 | | |
| ԳԻՐՔ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ. գրեաց Տէր Գրիգոր Դ. Գ. տիպ, 1882. ութածալ, 80 երես. Հայերէն տառերով եւ տաճկերէն ու հայերէն լեզուաւ շարադրուած տաճկախօսութեան համար. | 2 | | |
| ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ, տպեալ 1868. ութածալ. 438 երես | 6 | | 12 |
| ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԱՄԵՆԱՓՈՔՐ, տպեալ 1876. ութածալ, 580 երես. մանր ու գեղեցիկ տառերով եւ ծոցակիր գիրքով. | 8 | | 15 |
| ԳՈՐԾ ՈՍԿԵՂԻՆԻԿ ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ. տպեալ 1867, ութածալ, 158 երես. աշխարհիկ լեզուաւ և հրէական կտրուկ ոճով շարադրուած, յորում նոյն ինքն Սամուէլ Ռաբբին իւր քահանայապետին նամակներ ուղղելով՝ Հին ուխտի եւ Օրինաց արդէն խափանումն. Քրիստոսի յաշխարհ գալն, Նոր Օրինաց և Ուխտի հաստատութիւնն, Հրեից ազգի հազարաւոր տարիներ ցիր և ցան թափառումն մարգարէական և պատմական ապացոյցներով կը հաստատէ. Թարգմանեաց Մելքիսեդեկ դպիր. | 3 | | |
| ԳՈՎԱՍԱՆՔ. տպեալ 1867, ութածալ. 124 երես. Քրիստոսի բոլոր Տնօրինական տեղեաց վրայ յօրինուած Հայերէն և Տաճկերէն լեզուաւ ոտանաւորք. | 3 | | |

## Դ

| | Նխ. Ղ.Ղ. | Նխ. Փր. | Փոխ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՆՈՐ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ. աշխատասիրեաց Ս. Պ. Պափազեան, տպեալ 1868. ութածալ, 224 երես. նորուս մանկանց համար գիրը ճանչնալու եղանակաւ շարադրուած, յորում կը բովանդակին մանր աղօթքներ, բարոյական պատմութիւններ և զանազան զբօսալի առակներ. | 5 | | |

| | Կէս. Ղշ. | Կէս. Փր. | Փառ. Ղշ. |
|---|---|---|---|
| ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ · աշխատասիրեաց Ս. Պ. Փափազեան, Գ. տիպ, 1869. ութածալ, 140 երես. աշխարհաբար լեզուաւ դպրոցաց համար. | 3 | | |

## Ե

| | Կէս. Ղշ. | Կէս. Փր. | Փառ. Ղշ. |
|---|---|---|---|
| ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, տպեալ 1865. ութածալ, 431 երես. Պատմութիւն Ե՟ դարու, ուր պարզ գրաբառ լեզուաւ, պատմական գեղեցիկ ոճով զեղուն զգացմամբ նկարագրուած է Վարդանանց նահատակութիւնն, Պարսից կողմէն Հայոց ազգի կրած նեղութիւնքն, Վասակի ուրացութիւնն, Ղեւոնդեանց Մարտիրոսութիւնն և առհասարակ Հայոց ազգի քրիստոնէական հաւատոյ յաղթանակն. | 7 | | 14 |
| ԵՐԵՒՈՅԹ ԿՐԻՑ · գրեաց Գրիգոր Վ. Կ. Պ. տպեալ 1851, ութածալ, 176 երես. յորում պարզ գրաբար լեզուաւ բացատրուած են մարդոյ կիրքերն եւ նոցա ազդեցութիւններն. | 7 | | |
| ԵՐԿԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ Ի ՀԱՊԷՇՍՏԱՆ, յօրինեաց Տիմոթէոս Վ. Սափրիչեան, տպեալ 1871, երկու հատորէ բաղկացեալ, աշխարհաբար լեզուաւ, յորում բովանդակին զանազան պաշտօնական նամակք. Գեր. Սահակ Եպիսկոպոսի և հեղինակին Երկամեայ պանդխտութեան և գերութեան պատմութիւնն և Հապէշից կրօնական, բարոյական և քաղաքական վարուց և բարուց նկարագրութիւնքն. | 20 | | 30 |
| — Նոյնն՝ Գաղղիարէն. | 20 | | 39 |
| ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՈՒՂՂՈՒԱԾ, 'ի Մ. Վ. Մարկոսեանէ, տպեալ 1872, ութածալ, 179 երես. յորում մաքուր աշխարհաբար լեզուաւ բացատրուած են եկեղեցականաց մէն մի պարտականութիւնքն. | 3 | | |
| ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ · Թարգմանութիւն Նախնեաց, յԱսորոց լեզուէ, Գ. տիպ, 1870, ութածալ, 352 երես. փոքրագիր Աղօթագիրք, յորում պարունակուած են Եփրեմի Խուրւոյն աղօթքներն, և շաբաթի իւրաքանչիւր աւուրց աղօթելու համար յատուկ Աղաչխարութեան Սաղմոսք, Շարականք, Նարեկ և Գառնեցւոյն աղօթքներն եւ ամբողջ «Եկեսցէն». | 7 | | 14 |



## Զ

| | Կէս. Ղշ. | Կէս. Փր. | Փառ. Ղշ. |
|---|---|---|---|
| ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ · հեղինակութիւն Ադրիանուպոլսեցի և Ս. Երուսաղէմի միաբան Պօղոս Ս. Պատրիարքի Կ. Պօլսոյ, Գ. տիպ. 1862. քառածալ, Գ. հատոր, Հայ գրով, Տաճիկ բարբառով, բացատրութիւն Հին և Նոր Կտակարանի, յորդորակներով համդերձ. | 40 | | 70 |

## Ը

| | Կէս. Ղշ. | Կէս. Փր. | Փառ. Ղշ. |
|---|---|---|---|
| ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ներսիսի Շնորհալւոյն, տպեալ 1871, ութածալ, 334 երես. ութ գրչագրաց հետ բաղդատուած և ծանօթութեամբ տարբերութիւնքն նշանակուած, յորում պարունակին, | | | |
| Ա. Խրատական և յորդորական թուղթք առ համօրէն ազգս Հայոց և առ մասնաւոր անձինս ։ | | | |
| Բ. Թղթակցութիւնք Յունաց Մանուէլ կայսեր եւ Միխայէլ Պատրիարքին ընդ Ներսիսի Շնորհալւոյն, 'ի պատճառս դաւանաբանական խնդրոց, որովք խապառհերքին թիւր և անտեղի կարծիք Յունաց ։ | | | |
| Գ. Թուղթք 'ի զանազան ժամանակս առ այլ և այլ անձինս. | 18 | | 28 |

## Թ

| | Կէս. Ղշ. | Կէս. Փր. | Փառ. Ղշ. |
|---|---|---|---|
| ԹԱՆԳԱՐԱՆ ԽՐԱՏՈՒ · յօրինեաց Ադրիանուպոլսեցի եւ Ս. Երուսաղէմի միաբան Պօղոս Ս. Պատրիարք Կ. Պօլսոյ, Գ. տիպ, 1870. երկու հատ. քառածալ, 443 երես. պարզ գրաբար լեզուաւ ։ Առաջին հատորոյ մէջ Առաքինութեանց, իսկ երկրորդին մէջ՝ մոլութեանց վերայ կը խօսուի, վկայութեամբք Ս. Գրոց և արտաքին իմաստասիրաց, | 18 | | 28 |

Կիս. Ղշ. | Փր. | Փառ. Ղշ.

ԹԱՓՈՐԻ ՏԵՏՐԱԿ ՏԱՐԵԿԱՆ. տպեալ 1859. ութա-ծալ, 132 երես. կարգադրութիւն Ս. Ցարութեան տաճարին մէջ կատարուած տարեկան թափորներու եւ հանդէսներու. — 4

— Նոյն՝ Շաբաթական. տպեալ 1879. — 4

— Նոյն, Ս. Յակոբայ տաճարին մէջ իւրաքանչիւր տարի կատարուած հանդիսից եւ թափորից համար. տպեալ 1869. — 4

## Ժ

ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ. տպեալ 1870. քառածալ. 563 երես. Սաղմոսիւ և Տօնացուցիւ հանդերձ. — 50 | | 65

ԺԱՄԱԳԻՐՔ, խոշորագիր, տպեալ 1866. ութածալ, 650 երես. փայլուն տպագրութեամբ. — 20 | | 30

ԺԱՄԱԳԻՐՔ ամենափոքր, ծոցակիր գիրքով, տպեալ 1875. ութածալ, 660 երես. — 16 | | 25

## Խ

ԽՆԴԻՐ Ս. ՏԵՂՒՈՅ ԵՒ ՆՈՐԱ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆ. տպեալ 1871. ութածալ, 292 երես. Ս. Տեղեաց մէջ, մանաւանդ Ս. Յակոբայ, Ս. Փրկչի, Ս. Ծննդեան և քառասնից այրին մէջ միւս քրիստոնեայ ազգաց մեր սեփականութեանց դէմ 'ի գործ դրած բռնաքարութեանց նկարագրութիւնն, և գերեզմանատանց վերայ եղած 1870 թուին պաշտօնական քննութիւնն. — 5

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. տպեալ 1842. քառածալ, 191 երես. բաց 'ի յաւելուածէն. գործ Ներսէսի Լամբրոնացւոյ, բացատրութիւն սաղմոսաց, աղօթից և օրհնութեանց հրաշալի խորհրդոյ Ս. Պատարագին, որ 'ի Խորհրդատետրի. — 10

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. տպեալ 1873. քառածալ, 36 երես. — 10



Կիս. Ղշ. | Փր. | Փառ. Ղշ.

## Կ

ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ. աշխատասիրեաց Գ. Աւետեան Զաքարեանց. տպեալ 1871. ութածալ, 262 երես, յորում առողջութիւն պահպանելու համար պարզ գրաբար լեզուաւ եւ փորձառու գիտութեամբ նշանակուած են կարեւոր խրատք, ընտիր և օգտակար դեղօրայք և նոցա գործածութեանց զգուշաւոր եղանակքն. — 5

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՍԿԱԼԱՑ. թարգմանեաց 'ի Գաղղիերենէ աշխարհաբար լեզուաւ Մ. Ս. Տ. Ստեփանեան. տպեալ 1869. ութածալ, 94 երես. — 2

ԿՏԱԿԱԳԻՐ ՀՈԳԵՇԱՀ ԲԱՆԻՑ. գործ Մարգարայ Զ. Խոճենց, տպեալ 1853. ութածալ, 224 երես. զանազան նիւթոց վերայ պարզ գրաբար լեզուաւ և սահուն ոճով նամակներ, զորս հեղինակն առ իւր որդին ուղղած է, իւր խրատական խօսքերն Ս. Գրոց վկայութեանց վերայ հիմնելով. — 6

ԿՐԹԱՐԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ. Թարգմանաբար աշխատասիրութիւն Մելքիսեդեկ Վարդապետի Մուրատեանց. աշխարհիկ լեզուաւ, իբրեւ դասեր բաժանուած և բացատրուած.

Ա. Դաս, Սիմոն Պետրոս. — 1 | 20
Բ. » Սամարացին. — 1 | 20
Գ. » Որդիք Աստուծոյ. — 1 | 20
Դ. » Ամեն անուշահոտութեան. — 1 | 20
Ե. » Անապրբերութիւն կրօնական. — 1 | 20
Զ. » Արտասուք և Երգ. — 1 | 20
Է. » Տաճարի քարերը. — 1 | 20
Ը. » Հերմաս և Ոնեսիմ. — 1 | 20

## Հ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՀԱՑԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՑ. աշխատասիրութիւն Պետրոսի Շանշեանց. Բ. տիպ 1873. ութա-

| | Կէս. | | Փառ. |
|---|---|---|---|
| | Ղ.Ղ. | Փր. | Ղ.Ղ. |
| ծալ, 192 երես. ուր պարզ և դիւրըմբռնելի եղանակաւ, աշխարհաբար լեզուաւ և գաւառական կարգաւորութեամբ ամփոփած է համառօտիւ քրիստոնէական ուսումն 'ի պէտս Ազգային դպրոցաց : Սոյն գիրքն նախ 'ի Պոլիս հրատարակուեցաւ Արարատեան աշխարհիկ բարբառով և ապա 'ի Ս. Ածոռս տաճկաստանի հայ բարբառով. | 4 | | |
| ՀԱՑԵԼԻ ՎԻՐԱՑ. գրեաց Խոստանիշի Տ. Պօղոս քահանայ, տպեալ 1852. ութածալ, 220 երես. եօթն մահացու մեղաց վերայ գրաբար լեզուաւ ոտանաւորք (*). | 6 | | |
| ՀԵՔԵԱՆ. տպեալ 1881. որ է Սաղմոսի առաջի կանոնն, յատկապէս նորուս մանկանց համար խոշոր տառերով տպուած. | | 30 | |
| ՀԵՆՐԻԿՈՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ. քաղաքական վէպ, թարգմանեաց 'ի Գաղղիերէնէ 'ի Հայերէն աշխարհաբար լեզուաւ Պ. Ցովհաննէս, Թ. տպեալ 1870. ութածալ, 109 երես. | 2 | 20 | |
| ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ. աշխատասիրեաց Ցովսէփ Վարժապետ Մալէզեան. տպեալ 1870. ութածալ, 132 երես. հարց և պատասխանի ձևով և աշխարհաբար լեզուաւ. ուր Ս. Գրոց վկայութեամբք կ'ուսուցանէ հեղինակն՝ թէ ի՞նչ է ճշմարիտ սէրն, և ի՞նչ նշանն, ի՞նչ յատկութիւնն, ի՞նչ նպատակ և ի՞նչ վախճան ունի. | 2 | | |

## Ղ

ՂԾՐՈՒԲՆԱՑ ԵՐԵՍԱՑԻ, ԵՒ ԽՍԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ. տպեալ 1868. ութածալ, 160 երես, քանի մի ձեռագրաց բաղդատութեամբ, տպագրուած հանդերձ ծանօթութեամբ, յորում են — Նախ՝ Թուղթ Աբգար Հայոց Նախահաւատ Թագաւորի առ Քրիստոս. քարոզութիւն Թադէոսի առաքելոյն. Գիւտ խաչին Քրիստոսի յԵրուսաղէմ — Երկրորդ՝ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻՆ Ի Տ. Տ. ԽՍԱՑԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ, ուր կը պատմէ Պարսից թագաւորութեան սկզբնաւորութիւնն, իշխանութեանց



| | Կէս. | | Փառ. |
|---|---|---|---|
| | Ղ.Ղ. | Փր. | Ղ.Ղ. |
| խանգարումն, հակառակութիւնքն Աղուանից մէջ Հայոց ազգին հասուցած վնասներն և Վրաց Վախթանգ թագաւորին Գանձայ գալն. | 3 | | |

## Ճ

| | Կէս. | | Փառ. |
|---|---|---|---|
| | Ղ.Ղ. | Փր. | Ղ.Ղ. |
| ՃԱՇՈՑ ԳԻՐՔ. տպեալ 1873. քառածալ, երկու հատոր բաժնուած, ընտիր պատկերներով, 816 երես, զանազան գրչագիր և տպագիր Աստուածաշունչ Գրոց հետ բաղդատուած և ընտիր թղթոյ վերայ խոշոր տառերով մաքուր տպուած. | 300 | | 350 |
| ՃԱՌ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ. աշխատասիրեաց Ցովսէփ Վարժապետ Մարտիրոսեան Արաբկերցի, տպեալ 1860. ութածալ, 73 երես. | 4 | | |
| ՃԱՌՔ ԴՊՐՈՑԱԿԱՆՔ. տպեալ 1867. ութածալ, 31 երես, Ճշմարտութեան, Դաստիարակութեան, Մտաց Լուսաւորութեան և Վարդանանց վերայ խօսուած ճառեր են, զորս գրած են ժառանգաւոր Աշակերտք. | | 30 | |
| ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՁԵՌՆ. աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան, տպեալ 1868. ութածալ, 132 երես. դպրոցաց համար համառօտ ձևով և աշխարհաբար լեզուաւ. | 3 | | |

## Մ

| | Կէս. | | Փառ. |
|---|---|---|---|
| | Ղ.Ղ. | Փր. | Ղ.Ղ. |
| ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ. տպեալ 1856. ութածալ, 216 երես, յորում է Գրիգորի Նարեկացւոյն և Վահրամ վարդապետին հաւատոյ և խոստովանութեան վերայ խօսած գրաբար ընտիր ճառերն. | 6 | | |
| ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ. տպեալ 1869. ութածալ, 397 երես ծանօթութեամբ հանդերձ, գործ ԺԲ դարու ժամանակագրական պատմութիւն, սկսեալ 952 թուականէն հասուցանէ մինչ 1133 թուականն Քրիստոսի, ուր նշանակուած են 184 տարուան միջոցին պատահած անցքերն, (զորս քաղած է զանազան յիշատակարաններէ) և իւր ժամանակի Հայոց կրած տառապանքն եւ քրիստոնէական նահատակութիւնքն, իսկ իւր աշակերտն Գրիգոր երէցն, 1136 թուականէն նոյն պատմութիւնն նոյն ոճով շարունակելով կը հասուցանէ մինչև 1162 թուականն. | 14 | | 23 |

| | Կիս. Ղ.Ղ. | Կիս. Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՄԱՇՏՈՑ ԿԱՄ ԿԱՆՈՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . տպեալ 1879 . միջակ գիրքով . 510 երես . | 20 | | 30 |
| ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ . աշխատասիրեաց Գէորգ Աւետեան Զաքարեանց . տպեալ 1875 . ութածալ . 83 երես . յոյժ և դիւրահասանելի ձեւով և պարզ գրաբար լեզուաւ ՚ յորում համառօտակի Նոր Կտակարանն Հնով կը հաստատուի Մարգարէից վկայութեամբ . | 1 | 20 | |
| ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ . յօրինեաց Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումեանց . տպեալ 1850 . ութածալ . 808 երես . առ Եփեսացիսն գրուած թղթոյն մեկնութիւն է . մեկնական և պարզ գրաբար ոճով . | 25 | | 36 |
| ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ . տպեալ 1855 . ութածալ . 324 երես . Թարգմանութիւն Ներսիսի Լամբրոնացւոյ 'ի Յոյն բնագրէ . | 10 | | 15 |
| ՄԻԽԱՅԵԼԻ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԱՍՈՐՒՈՅ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ . տպեալ 1871 . ութածալ . 622 երես . գործ ԺԲ . դարու . ժամանակագրական պատմութիւն գրաբար լեզուաւ և ծանօթութեամբ հանդերձ . սկիզբն կ'առնու Ադամէն և կը շարունակէ մինչեւ ցՆերսէս Շնորհալին : Ուր կը նկարագրէ զանազան ժամանակ պատահած սաստիկ աւերն , շարժերն , հերձուածողաց երեւան գալն , Քաղկեդոնականաց արարքներն . Անտիոքայ , Հռովմայ , Աղեքսանդրու , Եփեսոսի , Կոստանդնուպոլսոյ , Երուսաղէմի և Հայոց Էջմիածնի և Կիլիկիոյ Աթոռակալաց անուններն ժամանակագրական կարգաւ մինչեւ իւր օրերն . | 16 | | 25 |
| — Նոյնն՝ այլ գրչագրաց հետ բաղդատուած և առանց ծանօթութեան . | 12 | | 20 |

## Յ

| | Կիս. Ղ.Ղ. | Կիս. Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ . Բ. տիպ . 1867 . ութածալ . 404 երես . վեց այլ և այլ ձեռագրաց հետ բաղդատեալ . գործ Թ. դարու . յորում գլխաւորապէս պատմուած են նոյն ժամանակի անցքերն . | 10 | | |



| | Կիս. Ղ.Ղ. | Կիս. Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՅՈՒՍԻՓ ԳԵՂԵՑԻԿ . գրեաց Տ. Գրիգորեան Խաչակ Ծ. Վ. Գաղատացի , տպեալ 1849 . ութածալ . 358 երես . 60 գիշերի բաժանեալ օրուն գրաբար լեզուաւ վիպասանութիւն , յորում Յովսէփ իւր Ասանէթ կողակցին հետ խօսելով զնա կը հրահանգէ և կը հրաւիրէ յԱստուածպաշտութիւն և 'ի բարոյականութիւն (*) . | 10 | | 20 |

## Ն

| | Կիս. Ղ.Ղ. | Կիս. Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՆԱՐԵԿ ԿԱՄ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ . տպեալ 1868 . ութածալ . 518 երես . մեծ գիրքով , և մեծ տառերով . | 12 | | 20 |
| — Նոյնն՝ ծոցակիր , ամենափոքր գիրքով և մանր տառերով , տպագրուած 1875 . ութածալ . 600 երես . յորում կը գտնուին և Բժշկութեան Աւետարանք . | 12 | | 20 |
| ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ . աշխատասիրեաց Գ. Ա. Խապայեան , տպեալ 1876 . ութածալ . 240 երես . աշխարհաբար լեզուաւ . դասական կարգաւորութեամբ եւ դիւրըմբռնելի եղանակաւ 'ի պէտս Ազգային դպրոցաց . | 8 | | |
| ՆՈՐ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ . աշխատասիրեաց Վ. Վ. Յակոբեան . Ա. հատորն տպեալ 1880 . կը բովանդակէ ամբողջական թուոց գործողութիւնքն դասական կարգաւորութեամբ . և ընդարձակ բացատրութեամբք . | 3 | | |
| Բ. հատորն , տպեալ 1881 . կը պարունակէ հասարակ և տասնորդական կոտորակաց գործողութիւններն դասական կարգաւորութեամբ և ընդարձակ բացատրութեամբք . | 5 | | |
| ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ , տպեալ 1867 . ութածալ . 800 երես . գեղեցիկ գիրքով և մաքուր տպագրութեամբ . | 12 | | 20 |

## Ո

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ . գրեաց Սարգիս Մ. Վանանդեցին , տպեալ 1863 . ութածալ . 68 երես . յորում Մեծն Ներսէս Հայրապետի մահն և Պապ թա-

| | Կէս. Ղ.Ղ. | Կէս. Փ. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| գաւորէն Թունաւորին նկարագրուած է Թատերական չորս արարուածով. (սպառած). | 4 | | |
| ՈՒԽՏ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ. գրեաց Մ. Վ. Մուրատեանց, Բ. տիպ, 1874. ութածալ, 58 երես. յորում բացատրուած է Հայրենասիրութիւնն աշխարհիկ սիրուն ոճով. | 1 | | |
| ՈՒՍՈՒՄՆ ԲԱՐՈՒՑ. գործ Փրանկլինոսի Սուաւէի. թարգմանեաց Զամուրճեան Պասուելին, տպեալ 1857. ութածալ, 605 երես. երեք մասանց բաժանեալ գրաբար լեզուաւ, որոց առաջին մասին մէջ կ'ուսուցանէ առանձին եղած պարտաւորութիւնն. երկրորդին մէջ՝ առ ընկերն, իսկ երրորդին մէջ առ Աստուած. (սպառած). | 18 | | 30 |
| ՈՒՍՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ. աշխատասիրեաց Պետրոս Ս. Շանշեանց, Բ. տիպ, 1874. ութածալ, 324 երես. Տասնաբանեայ պատգամաց և Օրինաց բացատրութիւնն, դասական դիւրըմբռնելի եղանակաւ և աշխարհաբար լեզուաւ, յորմէ ամենայն հասակի անձինք դիւրաւ կարող են ուսանիլ առ Աստուած, առ ընկերն, առ հանուր մարդկութիւնն և առ իւրեանց անձինս եղած պարտաւորութիւնքն. | 8 | | 15 |
| ՈՒՍՈՒՄՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ. թարգմանեաց 'ի Գաղղիարէն լեզուէ 'ի Հայ աշխարհաբար լեզուաւ Մելքոն Պ. Փափազեան, տպեալ 1869. ութածալ, 162 երես. յորում համառօտակի ամփոփուած է տրամաբանութեան կանոնները դասական եղանակաւ և պարզ ոճով. | 3 | | |

## Պ

| | Կէս. Ղ.Ղ. | Կէս. Փ. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՄԽԻԹԱՐԵԱՑ ՔԱՀԱՆԱՅԻ ՍԿՆԻՌԱՑԻՈՅ, Բ. տիպ, 1860. ութածալ, 70 երես. յորում հեղինակն զօրաւոր փաստերով կը հաստատէ ԺԲ. Առաքելոց հաւասարապատիւ լինելն, և կը հերքէ Հռովմէականաց նորանոր վարդապետութիւնն 'ի մասին գլխաւորութեան Պետրոսի, մի միայն զՔրիստոս դաւանելով Գլուխ Եկեղեցւոյ. | 4 | | |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. աշխատասիրեաց Խորէն վարդապետ Մխիթարեան. (սպառած). | 7 | | |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՑ, տպեալ 1870. ութածալ, | | | |



| | Կէս. Ղ.Ղ. | Կէս. Փ. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| 76 երես, գործ Նախնեաց ԺԳ. դարու, գրուած Ականց վանուց Ստեփան վանահօր հրամանաւ. Թաթարաց մեր Ազգին հասուցած չարիքն կը պատմէ. | 2 | | |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐԱՅ. թարգմանեաց 'ի Տաճիկ բնագրէ 'ի Հայ աշխարհիկ լեզու Աստուածատուր վարդապետ Տ. Յովհաննէսեան. յորում մանրամասնաբար նկարագրուած է Լենկ Թիմուրայ աշխարհաւէր արշաւանքներն, երկրակործան աւերմունքներն, անխիղճ գերեվարութիւնքն և վերջապէս բոլոր գործած չարութիւնքն. | 10 | | 20 |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՈՒՂՂԵՑՈՅՑ Ս. ՏԵՂԵԱՑ. քաղուածոյ թարգմանութիւն աշխարհաբար լեզուաւ. տպեալ 1872. ութածալ, 295 երես. որ ուխտաւորաց Ս. Տեղիքն շրջելու համար մեծ դիւրութիւն և առաջնորդութիւն կ'ընծեռէ. | 5 | | |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ. 'ի Մ. վարդապետէ Մուրատեանց. տպեալ 1872. ութածալ, 640 երես. յորում աշխարհաբար լեզուաւ, դասական դիւրըմբռնելի եղանակաւ և ժամանակագրական կարգաւ նկարագրուած են մարդկութեան վիճակն մինչև Քրիստոսի գալուստն և Քրիստոսի Տնօրէնութիւններն և ապա Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց քարոզութենէն սկսեալ մինչև 1872 թուականն Հայաստանեայց Եկեղեցւոյ իւրաքանչիւր դարու և շրջանի մէջ պատահած կրօնական և քաղաքական պատմութիւնքն, բարբարոսներէն կրած դառն հալածանքներն, Յունաց եւ Լատինաց կողմանէ քաշած բռնաբարութիւնքն, և իւր անխախտ և անշարժ տեւականութիւնն 'ի վերայ հիման Քրիստոնէական սուրբ Կրօնի. | 16 | | 25 |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ. աշխատասիրեաց Ս. Վ. Խապայեանց, Գ. տիպ, 1881. ութածալ, 340 երես. աշխարհիկ լեզուաւ և դասական կարգաւորութեամբ համառօտակի կ'աւանդէ Հին Ուխտի պատմութիւնն. 36 պատկերներով ներկայացնելով գլխաւոր դէպքերն. 'ի պէտս Ազգային դպրոցաց. | 7 | | 15 |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ, 'ի Մ. վարդապետէ | | | |

| | Կէս. Ղ.Ղ. | Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| Մուրատեանց, Գ. տիպ. 1882. ութածալ, 340 երես. Սուրբ Ս. Աւետարանի Պատմութիւնն պատկերազարդ և ժամանակագրական կարգաւ, դասական եղանակաւ, մաքուր աշխարհաբար լեզուաւ կանոնաւորուած է դպրոցաց համար, 'ի վերջն պատմութեանց բարոյական համառօտ յորդորականներով հանդերձ. | 7 | | 15 |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ. գրեաց Եղիա Մ. Տնտեսեան, տպեալ 1867. ութածալ, 440 երես. յորում կ'աւանդին Հին և Նոր Կտակարանաց Պատմութիւնքն համառօտակի և դասական եղանակաւ կանոնաւորուած, աշխարհաբար լեզուաւ դպրոցաց համար. | 8 | | 15 |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. գրեալ 'ի Պաղտասար անուն յումեմնէ Հայ տառերով եւ Տաճիկ լեզուաւ, տպեալ 1867. ութածալ, 112 երես. մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Տրդատ Թագաւորէն կրած չարչարանաց Պատմութիւնն է. | 3 | | |

## Ս

| | Կէս. Ղ.Ղ. | Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՍԱՂՄՈՍ. տպեալ 1868. քառածալ, 498 երես. խոշորագիր և մեծադիր ծերոց և կարճատես մարդոց համար | 10 | | 20 |
| ՍԱՂՄՈՍ. տպեալ 1869, քառածալ, 375 երես. նոյն տառերով և փոքր ինչ տարբեր դիրքով. | 6 | | 10 |
| ՍԱՂՄՈՍ. տպեալ 1873. ութածալ, 304 երես. միջակ գիրքով դպրոցաց համար. | 6 | | 10 |
| ՍԱՂՄՈՍ. տպեալ 1874. ութածալ, 511 երես. ամենափոքր ծոցակիր գիրքով. | 8 | | 15 |
| ՍԱՂՄՈՍ. մի և նոյն ձեւով, տպեալ 1870. ութածալ, 413 երես. | 3 | | |
| ՍԱՆԴՈՒԽՏ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ. հեղինակութիւն Թովմաս Թերզեանի, թարգմանեաց 'ի Գաղղիարէն Օր. Մաթիլտ Բ. Ֆէրուհ—խան. տպեալ 1881. ութածալ, 238 երես.—Հայերէն և Գաղղիարէն լեզուաւ երես առ երես. զարդարուած թատերական հինգ պատկերներով. կը նկարագրէ Սանդխտոյ կուսի աշակերտին Թադէոս Առաքելոյն և նահատակութիւնը. | 8 | | 10 |



| | Կէս. Ղ.Ղ. | Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՍԻՐՈՒՆ ՋՐՕՍԱՐԱՆ. տպեալ 1875, ութածալ, 88 երես. Թարգմանութիւն Գրիգոր վարդապետի Կ. Պօլսեցւոյ. հետաքրքրաշարժ փոքրիկ գրքոյկ, որ կը պարունակէ իւր մէջ Տան հիւթաւոր Գոյակաց կամ Ըմպելեաց գիտական բանախօսութիւնները, բարոյական մարզիչ եւ հրահանգիչ եղանակաւ. Սոյն բանախօսութեանց կամ առեղծախօսութեանց մէջ իւրաքանչիւր Գոյակ կը ջանայ զինքն ճանաչեցնել, իսկ ընդհակառակն՝ իւր զինախօսն կը ձգնի նորա վնասակար յատկութիւններն յերեւան հանել, որով մին զմիւսն յաղթահարելով՝ կը նշանակեն զմիմեանս և կը պարզեն, որ վնասակար է մարդոյ՝ չարաչար գործածութիւն ոգելից եւ գրգռիչ Ըմպելեաց. | 2 | | |
| ՍԻՕՆ ԱՄՍԱԳԻՐ. 1866—77 Թուականն. քառածալ, 24 երեսէ բաղկացեալ, ամեն ամիս հրատարակուած աշխարհաբար լեզուաւ. պարունակութիւնն է Ազգային, Բանասիրական, Գրագիտական, Կրօնական, Բարոյական և Ժամանակագրական, իւրաքանչիւր տարեկանը միատեղ կազմեալ. | 30 | | |
| ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. գրեաց Մկրտիչ Վ. Արծրունի, տպեալ 1859. (սպառած). | 10 | | |

## Վ

| | Կէս. Ղ.Ղ. | Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ատենադպրի Լեւոնի արքայի՝ բան 'ի յայտնութիւն Տեառն և յօծումն Լեւոնի Գ. Արքայի, տպեալ 1875. փոքրադիր տետր. | 2 | | |
| ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԺՈՒԽԱՅԱՑ ՄԱՆԿԱՆՑ. տպեալ 1868. ութածալ, 258 երես. յորում են Մաղթանք, Աղօթք, Քարոզք և Փոխք, 'ի պէտս վարժութեան մանկանց. | 6 | | |

## Տ

| | Կէս. Ղ.Ղ. | Փր. | Փառ. Ղ.Ղ. |
|---|---|---|---|
| ՏԱՆՎԻՑԼ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. թարգմանեաց 'ի Գաղղիերէնէ Զամուրճեան պատուելին. տպեալ 1855. ութածալ, 125 երես. հին Երուսաղէմի և Սողոմոնեան Տաճարին վերայ ճառօրէն գրուածք (սպառած). | 3 | | |

| | Կէս. | | Փա. |
|---|---|---|---|
| | Ղ.Ղ. | Փր. | Ղ.Ղ. |
| — ՏԱՐՐՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ. տպեալ 1852 (սպառած) | 8 | | |
| ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀՈՎՈՒԱԿԱՆ. Թարգմանեաց Զամուրճեան Յ. Պատուելին. տպեալ 1867. ութածալ. 336 երես, գրաբար համառօտ քարոզք առ վերատեսուչս և հօտս Եկեղեցւոյ, առ Տնօրէնութիւնս Քրիստոսի և առ Ս. Կուսանին. | 8 | | |
| — ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ. Պատուելի Գրիգորի Փէշտմալճեան, տպեալ 1855. (սպառած). | 12 | | |
| ՏՕՆԱՑՈՅՑ. տպեալ 1868. ութածալ. 322 երես. երկու հատոր. ըստ արարողութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգաւորեալ և պատշաճեալ. | 10 | | 20 |
| **Ք** | | | |
| ՔԵՐԱԿԱՆ Հայերէն. տպեալ 1872. դիւրին եղանակաւ. | | 20 | |
| ՔԵՐԱԿԱՆ Հայ—Գաղղիարէն, Բ. տիպ. 1882. ութածալ. 75 երես: Գաղղիարէն լեզուն դիւրաւ ուսանելու համար, յորում բաց 'ի այբբենարանէն կան Գաղղիարէն լեզուաւ Բարոյական, Բնական և Աշխարհագրական հատուածներ. | 2 | 20 | |
| ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան, տպեալ 1869. ութածալ, 120 երես. ուր հայերէն լեզուաւ բացատրուած են Գաղղիերէն քերականութեան կանոններն. | 3 | | |
| ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ. շարադրեաց Կ. Վ. Սրապեան. տպեալ 1870. ութածալ. 216 երես. | 4 | | |
| ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ հանդերձ արարբենով մանր տղայոց համար, տպեալ 1870. ութածալ. 31 երես. | 2 | | |
| **Օ** | | | |
| ՕՐԱՑՈՅՑ. Սկսեալ 'ի 1866է և շարունակաբար հատեալ մինչև ցայժմ. | 1 | | |

4755
41

[illegible] գրքեր. —

| | Ղղ. | Փր. |
|---|---|---|
| [illegible] ([illegible]) | 10 | |
| [illegible] | 8 | |
| [illegible] | 4 | |
| [illegible] | 5 | |
| [illegible] | 6 | |
| [illegible] | 3 | |
| [illegible] | 5 | |
| [illegible] | 20 | |



ՀՀ Ազգային գրադարան
NL0127282